ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(12)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№2(12)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№2(12)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(12)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դրամագիտություն

Ալեքսանդր Հակոբյան

Արխիպելագից դեպի մայրցամաք. «Հայաստանի դրամագիտություն» հասկացության շրջանակը (*ռուս.*) 8

Ժակ Նուրպեկլեան

Հին դրամների՝ պատմական և աշխարհագրական տեղեկությունները ստուգելու ունակությունը (*անգլ.*) 23

Հաամիկ Մարգարյան

Հայաստանի անձնավորումը Պարթևական հաղթակամարի վրա՝ ըստ Օգոստոս կայսեր մ. թ. ա. 19 – 16 թթ. հաղթադրամների (*ռուս.*) 27

Մաքսիմ Եվադեան

Հայոց թագուհի Էրատոյի մասին. պատմական և դրամագիտական ուսումնասիրություն (*անգլ.*) 38

Մաքսիմ Եվադեան, Հովանն Սիմոնեան

Մարիամ Կարսեցու չհրապարակված կնիքը և Բագրատունիների տան՝ Դավիթյան ծագման հավակնությունը (*անգլ.*) 47

Շահէն Յովսէփեան

Պարսկական դրամներ՝ թողարկված Երևանում (*հայ.*) 55

Ռոբեն Վարդանյան, Արմինե Զոհրաբյան, Համլետ Պետրոսյան

Դրամներ Արցախի Տիգրանակերտի պեղումներից (*հայ.*) 74

Ռոյ Առաքելյան

Ակնարկ Տիգրան II-ի դրամական թողարկումների ժամանակագրության մասին (*անգլ.*) 87

Մեյեդ Օմիդ Մոհամմադի, Սաիդ Սոլեյմանի

Հատվել է Իրանի Հյուսիսում. «Մուհր» մակադրոշմներ արծաթե դրամների վրա (*անգլ.*) 95

Վեռա Բոյան

Հայաստանից գտնված Հնդկաստանի Մեծ մողոլների դրամները և դրանց դերը միջազգային առևտրում (*հայ.*) 106

Վլադիմիր Գորոնչարովսկի, Անդրեյ Տերեշչենկո

Տավրիկյան Խերսոնեսի հարավային արվարձանում հայտնաբերված՝ բյուզանդական կայսր Արտավազդի հազվագյուտ սեմիսի մասին (*ռուս.*) 114

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր Հակոբյան, Լուսինե Ղուշչյան

Մետաղադրամը իրերի վրա. Ռուսաստանի ազգագրական թանգարանի հավաքածուից չորս հայկական զարդերի դրամագիտական վերլուծություն (*անգլ.*) 122

Աստղիկ Իսրայելյան

Դրամների մոգական և գեղագիտական արժեքները (*հայ.*) 132

Արտակ Ասատրյան

Պղնձարդյունաբերությունը և պղնձագործությունը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին – 20-րդ դարի սկզբին (Պատմաազգագրական համառոտ ուրվագիծ) (*հայ.*) 152

Լիլիա Ավանեսյան, Վեռա Բոյան

Գորգը և տեքստիլ ապրանքները Ռուսաստանի հետ հայ վաճառականների առևտրում 17-րդ դարի կեսին – 18-րդ դարի սկզբին (*ռուս.*) 166

Կարինե Բազեյան, Գրիգոր Աղանյան

Մետաղադրամը որպես զարդ Բարձր Հայքի և Շիրակի կանանց ավանդական հագուստի համալիրում (*հայ.*) 180

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Մանուչարյան

Դրամական անվանումների արտացոլումը հայկական վիմագրերում (*հայ.*) 190

Արմինե Ջոհրաբյան, Բորիս Գասպարյան, Անի Ադիգյոզալյան

Կշռաքար՝ հայտնաբերված Արտաշատ մայրաքաղաքի տարածքից (*հայ.*) 206

Ռոբերտո Դան, Անանարիտա Ս. Բոնֆանտի

Նախնական դիտարկումներ Հայաստանի պատմության թանգարանում պահվող Ուրարտական թագավորական թասերի նոր ուսումնասիրության մասին (*անգլ.*) 217

Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի, Արսեն Բոբոխյան, Գագիկ Սարգսյան, Լևոն Մկրտչյան

Ճանապարհային ցանցի գործարկումը բրոնզ-երկաթեդարյան Սյունիքում՝ խոշոր բնակավայրային ագլոմերացիաների գոյության պայմաններում (*հայ.*) 225

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Ժիրայր Քրիստրիանեան

Ռոբերտ Վ. Էդվարդսի հայկական և հարակից մինչհետմիջնադարյան ժամանակաշրջանի դրամների հավաքածուն՝ Կիլիկիայում գտածոների վայրերի փաստագրված տվյալներով (*անգլ.*) 242

Ռոբեն Վարդանյան, Արմինե Ջոհրաբյան, Հասմիկ Հովհաննիսյան

Ոչ թանգարանային դրամագիտական թվային շտեմարան թանգարանում (*հայ.*) 260

Զարուհի Բարսեղյան

«Պահպանելով անցյալը և ներկայացնելով ներկան՝ կառուցում ենք ապագան». ՀՀ կենտրոնական բանկի այցելուների կենտրոն (*հայ.*) 267

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 271

DOI:10.56653/18290361-2023.12-74

Ռուբեն Վարդանյան
Պատմական գիտությունների թեկնածու

Հայաստանի պատմության թանգարան
rubenvardanyan1@gmail.com

Արմինե Զոհրաբյան
Պատմական գիտությունների թեկնածու

Հայաստանի պատմության թանգարան
zohrabyanarmine@yahoo.com

Համլետ Պետրոսյան
Պատմական գիտությունների դոկտոր

Երևանի պետական համալսարան
hpetrosy@gmail.com

ԴՐԱՄՆԵՐ ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ*

Հիմնաբառեր: Արցախի Տիգրանակերտ, հնագիտական պեղումներ, դամբարաններ, հելլենիստական ժամանակաշրջանի դրամներ, Վաղ Միջնադարի դրամներ, Զարգացած Միջնադարի դրամներ, Նոր ժամանակների դրամներ:

Ներածություն

Քաղաքի հնագիտական հետքերը հայտնաբերվել են 2005 թ., իսկ 2006 թվականից սկսած այնտեղ իրականացվել են սիստեմատիկ հնագիտական պեղումներ ՀՀ ԳԱԱ Արցախի արշավախմբի կողմից, պ. գ. դ. Համլետ Պետրոսյանի ղեկավարությամբ: Պեղումներով բացվել են (տախտ. 1) քաղաքի անտիկ Ամրացված թաղամասի Միջնաբերդի վերին հատվածը, Միջնաբերդը թաղամասից բաժանող 83 մ երկարություն ունեցող պարիսպ-հենապատը, նույն թաղամասի հարավային պարիսպների մոտավորապես 450 մ ձգվող ժայռափոր հիմքերը, հյուսիսային պարիսպների մինչև 5 մ բարձրություն ունեցող և շուրջ 345 մ ձգվող հատվածը, հարավ-արևելյան պարսպի 40 մ հատվածը, Անտիկ առաջին թաղամասը, Ժայռափոր հնձանը, Արքայական աղբյուրներին կից ջրավազանը, Կենտրոնական թաղամասի վաղքրիստոնեական հրապարակը՝ զույգ եկեղեցիներով, խաչակիր մոնումենտալ կոթողի մնացորդներով և վաղքրիստոնեական տապանաբակով հանդերձ: Մասնակիորեն պեղվել են անտիկ կարասային դամբարանադաշտերից մեկը (Արևելյան դամբարանադաշտ), 19-րդ դարում կառուցված Փոստային կայանի մնացորդները, Երկրորդ անտիկ թաղամասը: Ցիցսարի գագաթին պեղվել են

* Ստացվել է 23.08.2023 թ., ուղարկվել է գրախոսման 29.08.2023 թ., ընդունվել է տպագրության 01.11.2023 թ.:

վաղքրիստոնեական դամբարան-մասունքարանը և եկեղեցին: Անտիկ, միջնադարյան և նոր ժամանակների բավական հարուստ ու բազմազան գտածոների շարքում կան նաև քաղաքի գոյության տարբեր փուլերը ներկայացնող արծաթե և պղնձե դրամներ:

Հելլենիստական ժամանակաշրջանի դրամներ

Հայտնաբերվել է 7 դրամ՝ բոլորն էլ մ.թ.ա. 1-ին դ. թողարկված պարթևական արծաթե դրախմաներ են: Դրամները գտվել են դամբարանների պեղումներից 2010, 2016 և 2017 թթ.: Քաղաքից դեպի հյուսիս-արևելք մեկ ու կես կիլոմետր հեռավորությամբ ի հայտ եկած ուշ հելլենիստական դամբարանադաշտում արշավախմբի կողմից բացվել են հինգ կարասային թաղումներ, ևս մեկ կարասային թաղում՝ ամրոցի տարածքում: Յոթ դրամներից երեքը հայտնաբերվել են դամբարանադաշտում պեղված կարասներից երկուսի մեջ: Մյուս չորս դրամները գտնվել են նույն դամբարանադաշտում կարասների հարևանությամբ տեղադրված քարարկղային դամբարանում: Անտիկ թաղումների դրամական գյուտերը կարևոր նշանակություն ունեն Տիգրանակերտի հիմնադրման ժամանակը հստակեցնելու գործում: Թաղումներում վավերացված գունազարդ խեցեղենը նույնական լինելով հատկապես Ամրացված թաղամասում հայտնաբերված գունազարդ խեցեղենի հարյուրավոր օրինակների հետ, հստակորեն ցուցում է մ.թ.ա. 1-ին դարի առաջին կեսը, ինչը լիովին համապատասխանում է Արցախում և Ուտիքում Տիգրան II-ի կողմից համանուն քաղաքների հիմնադրման քաղաքական հանգամանքներին՝ այն է մ.թ.ա. 80–70-ական թվականներ:

№ II կարասի (տախտ 2.1) երկու դրամներից մեկը հայտնաբերվել է հանգուցյալի բերանում, մյուսը՝ կողոսկրերի արանքում (Petrosyan et al. 2021, 295): Կարասի մեջ գտնվել են նաև ոսկե փայլաթիթեղով պատված ապակե ուլունքաշար, բրոնզե հայելի, երկաթե մատանիներ, իսկ դրսի կողմից, կարասի հատակին հենված վիճակում՝ գունազարդ սափոր:

Քարարկղային դամբարանի մեջ (տախտ 2.2) չորս դրամներ հայտնաբերվել են սկզբնապես թաղված չորս հանգուցյալների ոսկորների կույտի մեջ և նույն դամբարանում ավելի ուշ թաղված երկու հանգուցյալներից մեկի գանգի տակ (Petrosyan et al. 2021, 297): Դամբարանում եղել են նաև բրոնզե կիսալուսնաձև մեդալիոն, լավ պահպանված գունազարդ սափոր և մեկ այլ գունազարդ սափորի բեկորներ:

№ 5-րդ կարասում (տախտ 2.3) հանգուցյալի կմախքի շատ վատ պահպանվածության պատճառով դրամի տեղադրությունն անորոշ է (Petrosyan et al. 2021, 300): Կարասում եղել են նաև ապակե մածուկից պատրաստված ուլունքներ, ինչպես նաև բրոնզե և երկաթե մատանիների բեկորներ:

Դրամներից վաղագույնը (տախտ. 3.1), Դ. Սելվուդի դասակարգմամբ, տիպ 30-ն է (անհայտ արքա). այն թվագրվում է մ.թ.ա. 80–70-ական թվականներով և գտնվել է Որոդ II-ի երեք դրախմաների հետ նույն դամբարանում: Այս արքայի դրամները հայտնի են Տիգրիսի Սելևկիայում երկար տարիների ընթացքում առատորեն հատված տետրադրախմաներով, թագավորության ամբողջ տարածքի

տարբեր դրամահատարաններում թողարկված դրախմաներով:[1] Ըստ ՀՊԹ հավաքածուի տվյալների՝ նրա դրախմաներից կան Սառնակունքի գանձում, Սիսիանի իշխանական դամբարանում, և մեկ դրամ հայտնաբերվել է Ծաղկաձորում:

Միհրդատ 3-րդի (մ.թ.ա. 57 – 54 թթ.) դրախման (տախտ. 3.2) նույնպես գտնվել է Որոդ 2-րդի դրախմայի հետ միասին՝ II կարասային թաղման մեջ: ՀՊԹ-ի հավաքածուի մեջ Միհրդատ III-ի 22 դրախմաներից 3-ը ծագում են Սառնակունքի գանձից:

Պեղումներով հայտնաբերված մնացած հինգ դրախմաները (տախտ. 3.3-7) Որոդ 2-րդ արքայի տարբեր թողարկումներ են (Sellwood 1980, types 43.7, 43.?, 46.9, 47.5, 47.23): Հարավային Կովկասում մ.թ.ա. 2-րդ – 1-ին դարերի դրամական գտածոներում պարթև երկու մեծանուն արքաների՝ Միհրդատ 2-րդի (մ.թ.ա. 123 – 88 թթ.) և, հատկապես, Որոդ 2-րդի (մ.թ.ա. 57 – 38 թթ.) դրախմաները բացարձակ մեծամասնություն են կազմում: Միհրդատ II-ի մահվանից հետո, տարածաշրջանում գերիշխանության հասնելու համար պարթևների հետ հաջողությամբ մրցակցում էր Հայոց արքա Տիգրան 2-րդը (մ.թ.ա. 95 – 55 թթ.), իսկ նրա որդին՝ Արտավազդ 2-րդը (մ.թ.ա. 55 – 34 թթ.), հռոմեացիներին հաղթած պարթև արքա Որոդ 2-րդի դաշնակիցն էր: ՀՊԹ հավաքածուն պարունակում է Որոդ 2-րդի 157 դրախմա: Դրանցից 35-ի մասին կան հայտնաբերման վայրի և, առանձին դեպքերում, նաև հայտնաբերման հանգամանքի մասին տեղեկություններ, ըստ որոնց՝ դրամներից 11-ը Սառնակունքի գանձից են, իսկ 22-ը Հայաստանի Հանրապետության տարբեր վայրերից՝ հին Արտաշատ (6), Իջևանի շրջան (1), Էջմիածին (1), Տավուշի մարզի Արծվաբերդ գ. (1), Տավուշի գանձ (1), Սիսիանի դամբարան (2), Երևան (3), Ծաղկաձոր (1), Թալին (1), Գառնի (2), Ապարանի շրջ. Առյուծաբերդ գ. (1), Հայաստան (2), ևս մեկ դրամ ծագում է Անիից և մեկ դրամ Ադրբեջանի Գարադոնլու գյուղից (Արաքս գետի մոտ): Սրանց թվում նաև հնագիտական պեղումներից հայտնաբերված դրամներն են, որոնք ընդամենը հինգն են. Արտաշատից՝ 2, Թալինից՝ 1, Գառնիից՝ 2:

Տիգրանակերտի դամբարաններում հայտնաբերված դրամներից երեքը Եկբատանի, երկուսը՝ Ռագա-Արսակիայի և մեկական դրամ Միհրդատկերտի ու Սուզայի թողարկումներ են: Յոթ դրամներից առաջին վեցը թողարկվել են մեր տարածաշրջանին ամենամոտ գտնվող ու նաև ամենաառատ արտադրանք տվող դրամահատարաններում: Բնական է, որ այդ քաղաքներում թողարկված դրամները գերակշռում են ոչ միայն Արցախի Տիգրանակերտում, այլև ողջ Հարավային Կովկասում (Голенко, Раджабли 1975, 74. Акопян 1982, 85) :

Կարող ենք նկատել, որ դրամներ պարունակող երեք թաղումներում էլ ներկա են Որոդ 2-րդի դրախմաները, որոնք ժամանակագրորեն ամենաուշն են տվյալ դամբարանային համալիրում: Այս հանգամանքը և թաղումներում Որոդ 2-րդին հաջորդած

1 Դրամների պատկերագրական և տեխնիկական հատկանիշները թույլ են տալիս միայն ասել, որ դրամները թողարկվել են մ.թ.ա. 80 – 70-ական թվականների ընթացքում, տե՛ս Vardanyan 2006, 123 – 124: Գ. Ասսարն այս արքայի դրամաթողարկումը հասցնում է մինչև մ.թ.ա. 62/1թ., սակայն դրամագիտական առումով, այդպիսի թվագրումը քիչ հավանական է թվում, Assar 2006, 82 – 87:

Հրահատ 4-րդ (մ.թ.ա. 37 – 2թթ.) արքայի դրամների բացակայությունը կարող է հիմք հանդիսանալ վերոնշյալ թաղումները մ.թ.ա. 50-ականների վերջից մինչև 30-ականների առաջին կեսն ընկած ժամանակահատվածով թվագրելու համար:[2]

Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում հայտնաբերված դրամական գանձերը[3] և մեկուսի գտածոները (Пахомов 1926 – 1966. Абрамишвили 1974, 130 – 135; Голенко, Раджабли 1975, 86 – 92. Дундуа 1987, 148 – 153) վկայում են, որ մ.թ.ա. 2-րդ. վերջին տասնամյակներից մինչև մ.թ.ա. 1-ին դարի վերջին երրորդն ընկած ժամանակահատվածում Հայաստանի, Իբերիայի և Աղվանքի դրամական տնտեսության մեջ տարբեր երկրներից այստեղ հասած դրամական զանգվածում պարթևական դրախմաները գերակշռել են (Абрамишвили 1974, 112. Голенко, Раджабли 1975, 75; Дундуа 1987, 140 – 141. Раджабли 1997, 16): Մ.թ.ա. 1-ին դ. վերջին տասնամյակներից, բայց ավելի շատ մ.թ. 1-ին դարից սկսած Հայաստանում պարթև արքաների դրամները գրեթե դադարում են որևէ դեր խաղալ՝ իրենց տեղը զիջելով Հռոմեական կայսրության տարբեր վայրերում, մասնավորապես արևելյան դրամահատարաններում թողարկված ոսկե, արծաթե և պղնձե դրամներին (ՀԴՊ 2018, 21 – 31): Իսկ Իբերիայում և Աղվանքում, հատկապես առաջինում, հռոմեական դրամների նշանակալի աճին զուգընթաց, մ.թ. 1-ին դարի երկրորդ կեսից սկսած և առավելապես 2-րդ դարում, լայն տարածում են գտնում այսպես կոչված *գոտարզյան* տիպի պարթևական դրախմաները,[4] որոնք Հայաստանում հազվագյուտ են:

Տիգրանակերտյան դամբարաններում դրամների առկայությունը և պեղված դամբարանների քանակի համեմատ դրանց բավական մեծ թիվը վկայում են զարգացած դրամական տնտեսություն ունեցող քաղաքի մասին: Համեմատության համար արժե հիշատակել Տիգրանակերտից դեպի արևելք, մոտ 45 կմ հեռավորության վրա գտնվող Գալաթեփեում հայտնաբերված, 26 հեկտար տարածք զբաղեցնող անտիկ քաղաքատեղի մասին, որի դամբարանադաշտում պեղվել են 3 հիմնահողային և 14 կարասային թաղումներ (Гусейнова 2014[5]): Ոչ մի դամբարանում դրամ չի հայտնաբերվել:

---

2 Այդուհանդերձ, նկատի ունենալով Որոդ 2-րդի դրամների մեծ տարածվածությունը հարավկովկասյան տարածաշրջանում, Վրաստանում բացված մի հիմնահողային դամբարանում այդ արքայի դրախմայի հայտնաբերումը Ներոն կայսեր դենարի հետ միասին (Дундуа 1987, 152, № 84), ինչպես նաև այն, որ Հրահատ 4-րդի դրախմաների գտածոներն անհամեմատ սակավաթիվ են՝ չի կարելի լիովին բացառել տիգրանակերտյան թաղումների ավելի ուշ թվագրման հնարավորությունը:

3 Քննարկվող ժամանակահատվածին վերաբերող պարթևական դրամներ կան հետևյալ գանձերում. Սառնակունքի՝ Միհրդատ 1-ինից Որոդ 2-րդ (Մուշեղյան 1973, 74 – 78, № 99 – 120), Արտաշատի՝ Միհրդատ 1-ինից Սինատրուկ = Sellwood 1980, type 33 (Аракелян 1982, 52), Խինիսլիի՝ Միհրդատ 1-ինից Միհրդատ 3-րդ (Пахомов 1966, 17 – 19): Սիսիանում բացված իշխանական դամբարանում դրամների կեսից ավելին (15-ից 8-ը) կազմում են պարթևական դրախմաները՝ Միհրդատ 2-րդից Որոդ 2-րդը (Վարդանյան 2009: Vardanyan 2011) :

4 Դրամագիտության մեջ ավանդաբար կիրառվող այս պայմանական անվան տակ նկատի են առնվում Արտավան 1-ինի (10 – 38 թթ.), Գոտարզ 2-րդի (40 – 51 թթ.) և Արտավան 3-րդի (80 – 90 թթ.) դրախմաները և մ.թ. 1-ին դ. երկրորդ կեսում և 2-րդ դարում սրանց նմանությամբ պատրաստված այլ արծաթե դրամները, Голенко, Раджабли 1975, 82:

5 Այս հոդվածի հեղինակը որևէ խոսք չի ասում դամբարանների թվագրման մասին:

Հարավային Կովկասում դամբարանները հելլենիստական, հռոմեական և տեղական դրամական թողարկումների հիմնական «մատակարարներից են» և վերջին տասնամյակներում կատարված պեղումների շնորհիվ դրանց քանակը պետք է զգալիորեն ավելացած լինի ողջ տարածաշրջանում: Համալիր մի ուսումնասիրություն՝ հարավկովկասյան դամբարանային նյութերի ընդգրկմամբ, կարող էր հեռանկարային լինել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, էթնիկ փոխհարաբերությունների ուսումնասիրության տեսանկյունից:

Վաղ Միջնադարի դրամներ

Տիգրանակերտը, գտնվելով Աղվանքի մայրաքաղաք Պարտավի հարևանությամբ, զբաղեցնելով սահմանային դիրք Իրանի և Ալանաց դռների (Դերբենդ) միջև, պահպանել է իր ռազմավարական և տնտեսական նշանակությունը նաև միջնադարում՝ 6–13-րդ դդ.: Տիգրանակերտը սասանյան տիրապետության տակ գտնվող սահմանային նշանակություն ունեցող կետ է եղել, ինչով էլ կարելի է բացատրել այստեղ վաղ միջնադարյան դրամների սակաթիվ լինելը՝ երկու սասանյան և մեկ բյուզանդական դրամ: Պատմական այդ ժամանակաշրջանում քաղաքները մեծ թիվ չէին կազմում և ապրանքային շուկան բավարար զարգացած չէր:

Սասանյան արքա Կավադ 1-ինի (488–496, 499–531 թթ.) պղնձե դրամը (տախտ. 4.8) խիստ մաշված է, սակայն այն, ինչ նշմարվում է պատկերագրությունից, ինչպես նաև՝ պղնձե դրամի համար հատաձույլի այսպիսի անսովոր բարակությունը թույլ են տալիս եզրակացնել, որ այն ընդօրինակություն է: Կավադի երկրորդ անգամ իշխանության գալուց հետո տանուտիրական Հայաստանը նորից դառնում է մարզպանություն և կառավարվում է պարսիկ մարզպանների կողմից: Նրա օրոք վերանում են նաև Վրաց և Աղվանից թագավորությունները: Իբն ալ-Ասիրը գրում է «Ապա Կավատը.... Առանում կառուցեց Բայլական քաղաքը և Պարտավը (Բարդա), որն ամբողջ սահմանային գոտու (գլխավոր) քաղաքն է....» (Իբն ալ-Ասիր 1981, 40): Կավադ 1-ինի՝ 35-րդ տարով են թվագրվում ARM (Հայաստան) և ARAN (Աղվանք) դրամահատարանների հիշատակությամբ առաջին թողարկումները (Ջոհրաբյան 2021, 51): Պղնձե "դրամի" եզրագոտուն հինգ անցք է արված: Այն հավանաբար օգտագործվել է որպես հագուստի զարդ:

Տիգրանակերտում հայտնաբերված մյուս սասանյան դրամն արծաթից է (տախտ. 4.9): Այն խիստ մաշված վիճակում է, սակայն նշմարվող որոշ մանրամասներից կարելի դատել, որ այն ուշ սասանյան թողարկում է, ամենայն հավանականությամբ՝ Խոսրով 2-րդի (590–628 թթ.):

Տիգրանակերտի կենտրոնական թաղամասում, մեծ եկեղեցուն մոտ, գտնվել է բյուզանդական կայսր Հուստինիանոս 1-ինի պղնձե դրամ՝ 20 նումիա անվանական արժեքի (տախտ. 4.10): Այն հատվել է Կարթագենում, կայսեր իշխանության 12-րդ տարում (538 թ) (Belinger 1966, 163): Բյուզանդական դրամի այստեղ գտնվելն ավելի շուտ կարող է լինել Հուստինիանոս կայսեր և Կավադ արքայի օրոք տեղի ունեցած պարսկա-բյուզանդական պատերազմների, քան առևտրատնտեսական կապերի արդյունք:

Զարգացած Միջնադարի դրամներ

Տիգրանակերտից առ այսօր հայտնի չէ Արաբական խալիֆայության որևէ դրամ, չնայած այն փաստին, որ այդտեղից ոչ հեռու գտնվել է Աղվանքի կենտրոն Պարտավ/Բարդա քաղաքը, որտեղ արաբները հատել են մեծ թվով արծաթե և պղնձե դրամներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջնադարյան խոշոր բնակավայրերի պեղումներով գտնված դրամների էական մասը, որպես կանոն, պղնձե թողարկումներ են լինում, ինչը քաղաքի՝ որպես առևտրի և արհեստների կենտրոնի բնորոշ հատկանիշն է: Այդ է վկայում նաև Տիգրանակերտի Կենտրոնական թաղամասի պեղումների ընթացքում հայտնաբերված դրամական գտածոների կազմը: Դրանք թուրք Ելտկուզյան (կամ Իլդեգիզյան) կառավարիչների թողարկած պղնձե դրամներ են: Դրամներից երկուսը այդ հարստության հիմնադիր՝ աթաբեկ Շամս ադ-Դին Ելտկուզի (1136 – 1175 թթ.) թողարկումներ են (տախտ. 4.11 – 12) (Сейфеддини 1978, 60 – 62; Kouymjian 1969, 306, 309): Վերջինիս նստավայրը Տերտեր գետի ափին գտնվող Պարտավ/Բարդա քաղաքն էր: Մնացած 12 դրամները աթաբեկ Նուսրաթ ադ-Դին Աբու Բաքրի (1191 – 1211 թթ.) պղնձե թողարկումներ են (տախտ. 4.13 – 22 և 5.23 – 25) (Сейфеддини 1978, 68 – 71; Kouymjian 1969, 333 – 349): Ջահան Փալևանի մահից հետո Ելտկուզյանների տարածքը բաժանվեց նրա որդիների միջև, որոնցից Աբու Բաքրին բաժին ընկավ Աղվանքը և հարակից մի քանի տարածքներ: Նրա հիմնական նստավայրն էր Տիգրանակերտից ոչ հեռու գտնվող Գանձակը (Сейфеддини 1978, 37): Հավաբար այս հանգամանքով կարելի է բացատրել արցախյան քաղաքում Աբու Բաքրի դրամների այսպիսի առատությունը: Ուշագրավ է այն, որ ելտկուզյան 14 դրամներից 13-ը հայտնաբերվել են կենտրոնական թաղամասում՝ եկեղեցու շրջակայքում՝ 0-ից մինչև 3.5 մ խորություններից:

Պեղումներից հայտնաբերված՝ այս ժամանակաշրջանի միակ արծաթե դրամը Ռումի սուլթան Կայ Քոբադ իբն Կայ Խոսրովի (1219 – 1236) դիրհեմն է (տախտ. 5.26):

Սելջուկյաններից հետո նկատվում է դրամաշրջանառության երկարատև ընդհատում: Հետաքրքիր է, որ չեն հայտնաբերվել մոնղոլական և հետմոնղոլական 13 – 15-րդ դդ. դրամներ. փաստ, որը համապատասխանում է հնագիտական հետազոտության այն եզրակացությանը, որ Տիգրանակերտում հնագիտական միջնադարյան գտածոների թվագրման վերին սահմանը 13-րդ դարի առաջին կեսն է:

Նոր ժամանակների դրամներ

Դրամների հաջորդ խումբը վերաբերում է 16 – 17-րդ դդ. և ներկայացված է Գյանջայում հատված՝ Գյանջայի խանության մեկ արծաթե (տախտ. 5.27) և Փանահաբադում հատված՝ Ղարաբաղի խանության երեք պղնձե թողարկումներով (տախտ. 5.28-30): Դրամները հայտնաբերվել են հնավայրի տարբեր հատվածներում:

Քաղաքի պարսպապատ տարածքից արևելք, սարի ստորոտում բխող աղբյուրի շրջակայքում կատարված պեղումների ընթացքում հայտնաբերվել են 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբի Ռուսական կայսրության պղնձե դրամներ (տախտ. 5.31-33):

Եզրակացություն

Արցախի Տիգրանակերտի հնագիտական պեղումների արդյունքում ձեռքբերված անտիկ, միջնադարյան և նոր ժամանակների նյութական մշակույթի բավական հարուստ ու բազմազան գտածոների շարքում կան նաև քաղաքի գոյության այդ փուլերի ընթացքում շրջանառված արծաթե և պղնձե դրամներ: Դրանք հայտնաբերվել են 2008 – 2013, 2016 – 2017 թթ. դաշտային աշխատանքների ժամանակ:

Արշավախմբի պեղած վեց կարասներից երկուսում և մեկ քարարկղային դամբարանում հայտնաբերվել են յոթ պարթևական դրախմաներ, որոնք վերաբերում են մ.թ.ա. 80 – 38 թթ. ժամանակահատվածին: Հելլենիստական Տիգրանակերտի դամբարաններում դրամների առկայությունը և պեղված դամբարանների քանակի համեմատ դրանց բավական մեծ թիվը վկայում են զարգացած դրամական տնտեսություն ունեցող քաղաքի մասին:

Վաղ միջնադարյան շրջանի դրամները սակավաթիվ են. ներկայացված են սասանյան մեկ դրախմայով, սասանյան դրամի մեկ պղնձե ընդօրինակությամբ և մեկ բյուզանդական ֆոլիսով:

Զարգացած միջնադարին վերաբերող դրամները, որոնք գերազանցապես հայտնաբերվել են Կենտրոնական թաղամասից, ելտկուզյան երկու աթաբեկների՝ Շամս ադ-Դինի և Աբու Բաքրի պղնձե ֆելսեր են: Հատկապես վերջինիս թողարկումների մեծ քանակությունը՝ 12 դրամ, կարող է բացատրվել այն փաստով, որ նրա հիմնական նստավայրը Տիգրանակերտից ոչ հեռու գտնվող Գանձակն էր: Այս ժամանակաշրջանի գտածոների թվում է նաև Ռումի սուլթան Կայ Քոբադ 1-ինի արծաթե դիրհեմը:

Հնագիտական հետազոտություններն արձանագրել են, որ այս բնակավայրում միջնադարյան նյութական մշակույթի գտածոների ժամանակագրական վերին սահմանը 13-րդ դ. առաջին կեսն է, ինչին լիովին համապատասխանում է այստեղ 13 – 16-րդ դդ. թվագրվող դրամների բացակայությունը:

Նոր ժամանակները ներկայանում են 17 – 18-րդ դդ. թվագրվող՝ Գյանջայի խանության մեկ արծաթե և Ղարաբաղի խանության երեք պղնձե թողարկումներով, ինչպես նաև բլրի ստորոտին գտնվող աղբյուրի շրջակայքում կատարված պեղումներով հայտնաբերված՝ 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբի ռուսական պղնձե կոպեկներով:

Կատալոգ

Հելլենիստական շրջան

1. Պարթևական թագավորություն, Անհայտ արքա, մոտ. մ.թ.ա. 80 – 70 թթ.:
   Արծաթ, դրախմա, 3.35 գ. 20.6 մմ, 12 ժ: Հատվել է Ռագայում (Արսակիա):
   Sellwood 1980, type 30.16:
   Քարարկղային դամբարան, 2016 թ.

2. Պարթևական թագավորություն, Միհրդատ 3-րդ, մ.թ.ա. 57 – 54 թթ.:
   Արծաթ, դրախմա, 3.58 գ, 21.2 մմ, 12 ժ: Հատվել է Եկբատանի արքունական դրամահատարանում:
   Sellwood 1980, type 41.14:
   2-րդ կարասային թաղում, 2010 թ.:

3. Պարթևական թագավորություն, Որոդ 2-րդ, մ.թ.ա. 57 – 38 թթ.:
Արծաթ, դրախմա, 3.12 գ, 19.4 մմ, 12 ժ: Հատվել է Եկբատանի արքունական դրամահատարանում:
Sellwood 1980, type 46.9:
II կարասային թաղում, 2010 թ.:

4. Նույնը:
Արծաթ, դրախմա, 3.41 գ, 20.3 մմ, 12 ժ: Հատվել է Եկբատանում:
Sellwood 1980, type 43.7:
Քարարկղային դամբարան, 2016 թ.

5. Նույնը:
Արծաթ, դրախմա, 3.53 գ, 19.8 մմ, 12 ժ: Հատվել է Ռագայում:
Sellwood 1980, type 47.5:
Քարարկղային դամբարան, 2016 թ.

6. Նույնը:
Արծաթ, դրախմա, 3.39 գ, 19.2 մմ, 12 ժ: Հատվել է Շոշում (Սուզա):
Sellwood 1980, type 47.23:
Քարարկղային դամբարան, 2016 թ.

7. Նույնը:
Արծաթ, դրախմա, 2.58 գ, 19.2 մմ, 12 ժ: Հատվել է Միհրդատկերտում (՞):
Sellwood 1980, type 43.5 (?):
5-րդ կարասային թաղում, 2017 թ.:

Վաղ միջնադար

8. Իրանի Սասանյան կայսրություն, Կավադ 1-ին, 488 – 496, 499 – 531 թթ.:
Պղինձ, 1.69 գ, 29.3 մմ, 12: Ընդօրինակություն:
Հ. 206, տեղ. ՍԲ-3, քառ. Aa 34, խոր. 24.50 մ, լիցքից, 01.08.2010 թ.:

9. Իրանի Սասանյան կայսրություն, Խոսրով 2-րդ (՞), 590 – 628 թթ.:
Արծաթ:
Տեղ. եկեղեցի, քառ. Hf 119, 120, ստիլոբատի մոտ, խոր. 3.3 մ, 07.08.2009 թ.:

10. Բյուզանդական կայսրություն, Հուստինիանոս 1-ին, 527 – 565 թթ.:
Պղինձ, 20 նումիա, 9.67 գ, 31.6 մմ, 7 ժ:
Հատվել է Կարթագենում, իշխանության 12-րդ տարում՝ 538 թ.:
Հ. 449, տեղ. եկեղեցի 1, քառ. He 123, գտնվել է երկաթե տուփի մեջ, 2011 թ.:

Զարգացած միջնադար

11. Ելտկուզյան աթաբեկություն, Շամս ադ-Դին Ելտկուզ (Իլդեգիզ), 1136 – 1174 թթ.:
Պղինձ, 2.77 գ, 21.3 մմ, 9 ժ:
Հ. 517, տեղ. եկեղեցի, քառ. He 120:

12. Նույնը:
Պղինձ, 4.40 գ, 25.2 մմ, 3 ժ:
Հ. 451, տեղ. եկեղեցու շրջակայք, վերգետնյա, պատահական գտածո:

13. Ելտկուզան աթաբեկություն, Նուսրաթ ադ-Դին Աբու Բաքր, 1191 – 1211 թթ.:
Պղինձ, 3.01 գ, 24.7 մմ, 6 ժ: Հիջ. 604 = 1207/08 թ.:
Հ. 657, տեղ. A11 եկեղեցի, պատահական գտածո, 2011 թ.:

14. Նույնը:
Պղինձ, 7.99 գ, 24.1 մմ, 9 ժ:
Հ. 659, տեղ. S11 եկեղեցի, պատահական գտածո, 2011 թ.:

15. Նույնը:
Պղինձ, 9.72 գ, 24.0 մմ,-ժ:
Հ. 660, տեղ. S11, պատահական գտածո, 2011 թ.:

16. Նույնը:
Պղինձ, 7.12 գ, 25.7 մմ, 12 ժ:
Հ. 452, տեղ. եկեղեցու շրջակայք, վերգետնյա, պատահական գտածո, 2012 թ.:

17. Նույնը:
Պղինձ, 3.47 գ, 22.5 մմ,-ժ:
Հ. 296, տեղ. S12 եկեղեցի, վերգետնյա, 04.11.2012 թ.:

18. Նույնը:
Պղինձ, 8.83 գ, 25.1 մմ, 9 ժ:
Հ. 282, տեղ. S12 եկեղեցի 3, քառ. Ha 124, խոր. 0.75 մ, 04.07.2012 թ.:

19. Նույնը:
Պղինձ, 7.34 գ, 23.5 մմ, 7 ժ:
Հ. 432, տեղ. եկեղեցի 3, քառ. Hb 122, խոր. 1.3 մ, 12.08.2012 թ.:

20. Նույնը:
Պղինձ, 4.62 գ, 25.0 մմ, 12 ժ:
Հ. 284, տեղ. S12 եկեղեցի 3, քառ. Ha 124, խոր. 0.65 մ, 04.07.2012 թ.:

21. Նույնը:
Պղինձ, 2.85 գ, 24.3 մմ, 3 ժ:
Հ. 262, տեղ. S13 եկեղեցի, քառ. Ha Hb 122, խոր. 3.40 մ, 21.07.2013 թ.:

22. Նույնը:
Պղինձ, 5.26 գ, 25.0 մմ, ժ:
Հ. 261, տեղ. S13 եկեղեցի, քառ. Ha, Hb 122, խոր. 3.40 մ, 21.07.2013 թ.:

23. Նույնը:
Պղինձ, 5.02 գ, 26.0 մմ, 11 ժ:
Հ. 263, տեղ. S13 եկեղեցի, քառ. Hb 122, խոր. 3.5 մ, 23.07.2013 թ.:

24. Նույնը:
Պղինձ, 3.70 գ, 24.7 մմ, 3 ժ:
Հ. 264, տեղ. S13 եկեղեցի, քառ. Hb 122, խոր. 3.5 մ, 23.07.2013 թ.:

25. Անորոշ, 12 – 13-րդ դդ.:
Պղինձ, 3.49 գ, 22.0 մմ,-ժ:
Հ. 658, պատահական, 2011 թ.:

26. Ռումի (Իկոնիայի) սուլթանություն, Ալա ալ-Դին Կայ Քոբադ 1-ին, 1219/20-1236 թթ.:
Արծաթ, 2.10 գ, 21.2 մմ, 1 ժ:
Հ.586, տեղ. եկեղեցի, 2009 թ.:

Նոր ժամանակներ

27. Գյանջայի խանություն, 18-րդ դ. վերջ:
Արծաթ, 2.99 գ, 26.4 մմ, 1 ժ: Հատվել է Գյանջայում:[6]
Հ. 1, տեղ. գերեզմանատուն, 2017 թ.:

28. Ղարաբաղի խանություն, 18-րդ դ.:
Պղինձ, 4.22 գ, 22.0 մմ, 1 ժ: Հատվել է Փանահաբադում:
Հ. 518, տեղ. եկեղեցի, խոր. 0.72 մ, 30.06.2008 թ.:

---

6 Շնորհակալություն ենք հայտնում Ալեքսանդր Հակոբյանին՝ դրամի որոշման մեջ ճշտումներ կատարելու համար:

29. Ղարաբաղի խանություն, 17 – 18-րդ դդ.:
Պղինձ, 4.32 գ, 19.6 մմ, 1 ժ: Հատվել է Փանահաբադում:
Հ. 478, տեղ. եկեղեցի 3, քառ. Hb 123, խոր. 2.05 մ, 07.30.2011 թ.:

30. Ղարաբաղի խանություն, 17 – 18-րդ դդ.:
Պղինձ, 3.78 գ, 20.4 մմ, 10 ժ: Հատվել է Փանահաբադում:
Հ. 649, տեղ. աղբյուր, խոր. 1.20 մ, 22.07.2011 թ.:

31. Ռուսական կայսրություն, Նիկոլայ I, 1825 – 1855 թթ.:
Պղինձ, 1 կոպեկ, 10.15 գ, 28.7 մմ, 12 ժ: Հատվել է Եկատերինբուրգում, 1840 թ.:
Հ. 655, տեղ. աղբյուր (արմ. պատ), խոր. 1.05 մ, 28.07.2011 թ.:

32. Ռուսական կայսրություն:
Պղինձ, 5 կոպեկ, 14.82 գ, 32.3 մմ, 12 ժ: Հատվել է Սանկտ Պետերբուրգում, 1879 թ.:
Հ. 653, տեղ. աղբյուր, խոր. 1.50 մ, 27.07.2011 թ.:

33. Ռուսական կայսրություն:
Պղինձ, 2 կոպեկ, 6.17 գ, 24.2 մմ, 12 ժ: Հատվել է Սանկտ Պետերբուրգում, 1906 թ.:
Հ. 654, տեղ. աղբյուր, խոր. 2.50 մ, 27.07.2011 թ.:

Հապավումներ

Հ.	գույքային համար
ՏԵՂ.	պեղման տեղամաս
ՔԱՌ.	պեղման քառակուսի
ԽՈՐ.	խորություն

Սկզբնաղբյուրներ

ԻԲՆ ԱԼ-ԱՍԻՐ 1981 – Իբն ալ-Ասիր, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ 11. Արաբական աղբյուրներ, հ. Բ, թարգմանություն բնագրից, առաջ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան,1981 :

Ուսումնասիրություններ

ԶՈՀՐԱԲՅԱՆ 2021 – Զոհրաբյան Ա., Հայաստանի դրամական տնտեսությունը III – X դդ. (սասանյան, արաբական ժամանակաշրջաններ), Երևան, Հայաստանի պատմության թանգարան, 2021:

ՄՈՒՇԵՂՅԱՆ 1973 – Մուշեղյան Խ., Հայաստանի դրամական գանձերը, I, Երևան,1973:

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2009 – Վարդանյան Ռ., Սիսիանի դամբարան. Դրամներ, Ժ. Խաչատրյանի «Սիսիանի դամբարանը (մ.թ.ա. I դարի երկրորդ կես)» գրքում, Երևան, 2009, էջ 82 – 87, աղ. XIV:

ՀԴՊ 2018 – Վարդանյան Ռ., Մուղալյան Գ., Վարդանյան Ա., Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Հ., Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը, Վարդանյան Ռ. (խմբ.), Երևան, ՀՀ կենտրոնական բանկի հրատ., 2018:

ASSAR 2006 – Assar G., A Revised Parthian Chronology of the Period 91 – 55 BC, Parthica 8, 2006, pp. 55 – 104.

BELINGER 1966 – Belinger A.R., Catalogue of the Byzantine Coins in the Dumbarton Oaks Collection and in the Whittemore Collection, Volume 1, Anastasius I to Maurice, 491 – 602, Washington, 1966.

KOUYMJIAN 1969 – Kouymjian D. A Numismatic History of Southeastern Caucasia and Adharbayjan Based on the Islamic Coinage of the 5th/11th to the 7th/13th centuries, Columbia Universitym 1969.

PETROSYAN ET AL. 2021 – Petrosyan H., Safaryan V., Karapetyan I., Kirakosyan L., Vardanyan R., Vardanesova T., Gabrielyan A., Pithos Burials of Tirganakert in Artsakh, Archaeology of Armenia in Regional Context, Proceedings of the International Conference dedicated to the 60th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography Held on July 9 – 11, 2019 in Yerevan, edited by P. Avetisyan, A. Bobokhyan, Yerevan, 293 – 304.

SELLWOOD 1980 – Sellwood D., An Introduction to the Coinage of Parthia, London, (2nd ed.), 1980.

VARDANYAN 2006 – Vardanyan R., Some remarks on the arrangement of the Parthian "Dark Age" coin series, Parthica 8, 2006, pp. 105 – 129.

VARDANYAN 2011 – Coins, in: Khachatryan Zh., The Tomb of Sisian (second half of the 1st century BC), Parthica 13, 2011, pp. 67 – 71, Fig. 16.

АБРАМИШВИЛИ 1974 – Абрамишвили Т. Я., Каталог парфянских монет государственного музея Грузии, Тбилиси, 1974.

АКОПЯН 1982 – Акопян А., Клад медных парфянских монет из Апарана, Вестник Древней Истории 2, 1982, сс. 84 – 89.

АРАКЕЛЯН 1982 – Аракелян Б. Н., Арташат I. Основные результаты раскопок 1970 – 1977 гг., Археологические раскопки в Армении № 16, Ереван, 1982.

ГОЛЕНКО, РАДЖАБЛИ 1975 – Голенко, И.А., Раджабли, А.М., Али-Байрамлинский клад и некоторые вопросы обращения парфянских монет в Закавказье, Вестник Древней Истории 2, 1975 сс. 71 – 93.

ГУСЕЙНОВА 2014 – Гусейнова Г., Кувшинные погребения некрополя Галатепе, Гілея: науковий вісник, 91, 2014, сс. 169 – 173.

ДУНДУА 1987 – Дундуа Г. Ф., Нумизматика античной Грузии, Тбилиси, 1987.

ПАХОМОВ 1926 – 1966 – Пахомов, Е.А., Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, Баку, 1926 – 1966, вып. I – IX.

ПАХОМОВ 1966 – Пахомов, Е.А., Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, Баку, 1966, вып. IX.

РАДЖАБЛИ 1997 – Раджабли А., Нумизматика Азербайджана, Баку, 1997.

СЕЙФЕДДИНИ 1978– Сейфеддини М.А., Монетное дело и денежное обращение в Азербайджане XII – XV вв., Книга I, Баку, 1978.

Ruben Vardanyan
PhD

History Museum of Armenia
rubenvardanyan1@gmail.com

Armine Zohrabyan
PhD

History Museum of Armenia
zohrabyanarmine@yahoo.com

Hamlet Petrosyan
Doctor of Historical Sciences

Yerevan State University
hpetrosy@gmail.com

COINS FROM EXCAVATIONS IN TIGRANAKERT OF ARTSAKH

Keywords: Tigranakert of Artsakh, archaeological excavations, tombs, the Hellenistic period coins, coins of the early medieval period, coins of the High Middle Ages, modern period coins.

Among the quite rich and diverse finds of Ancient, Medieval and Modern periods material culture obtained as a result of the archaeological excavations of Tigranakert (in Artsakh), there are also silver and copper coins circulated during those stages of the city's existence. They were found in 2008 – 2013, 2016 – 2017, during field works.

In two of the six pithos burials and one stone box burial excavated by the expedition, seven Parthian drachmas were found, dating back to 80 – 38 BC. The presence of coins in the tombs of Hellenistic Tigranakert and their relatively large number compared to the number of excavated tombs testify to a city with a developed monetary economy.

Coins of the early medieval period are few: they are represented by one Sasanian drachm, one copper imitation of a Sasanian coin, and one Byzantine folis.

Coins of the developed Middle Ages, which have been found mainly from the Central Area of the city, are copper fels from the two Eldiguzid atabeks, Shams ad-Din (1136 – 1175) and Abu Bakr (1191 – 1211). Especially the large number of the latter's issues, 12 coins, can be explained by the fact that his main residence was Gandzak/Ganja, not far from Tigranakert. Among the finds of this period is also the silver dirhem of Kay Qobad I (1219 – 1236), Sultan of Rum.

Archaeological studies have recorded that the upper chronological limit of finds of medieval material culture in this settlement is the first half of the 13 century, which fully corresponds to the fact that there are no coins of the 13 – 16 centuries here.

New times are represented by a silver issue of the Ganja Khanate and three copper issues of the Karabakh Khanate that date back to the 12th – 18th centuries; and also by find during excavations near a water source at the foot of the hill, Russian copper kopecks of the 19th – early 20th centuries.

Рубен Варданян
Кандидат исторических наук

Музей истории Армении
rubenvardanyan1@gmail.com

Армине Зограбян
Кандидат исторических наук

Музей истории Армении
zohrabyanarmine@yahoo.com

Гамлет Петросян
Доктор исторических наук

Ереванский государственный университет
hpetrosy@gmail.com

МОНЕТЫ ИЗ РАСКОПОК АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА

Ключевые слова: Тигранакерт, Арцах, археологические раскопки, погребения, монеты элленистического периода, монеты раннего Средневековья, монеты развитого Средневековья, монеты нового времени.

Среди довольно богатых и разнообразных находок материальной культуры античности, средних веков и нового времени, полученных в результате археологических раскопок арцахского Тигранакерта, есть также серебряные и медные монеты, находившиеся в обращении на вышеупомянутых этапах существования города. Их находили в 2008 – 2013, 2016 – 2017 годах, во время полевых работ.

В двух из шести кувшинных погребений и в одной каменной гробнице, раскопанных экспедицией, было найдено семь парфянских драхм, чеканенных между 80 – 38 гг. до нашей эры. Наличие драхм в гробницах эллинистического Тигранакерта и относительно большое их количество по сравнению с количеством раскопанных гробниц свидетельствует о городе с развитым денежным хозяйством.

Монет раннесредневекового периода немного: они представлены одной сасанидской драхмой, одной медной имитацией сасанидской монеты и одним византийским фолисом.

Монеты развитого средневековья, найденные в основном из центральной части города, представляют собой медные фельсы двух ильдегизидских атабеков Шамс ад-Дина (1136 – 1175) и Абу Бакра (1191 – 1211). Особенно большое количество выпусков последнего, 12 монет, можно объяснить тем, что его основной резиденцией был Гандзак/Гянджа, расположенный недалеко от Тигранакерта. Среди находок этого периода также серебряный дирхем Румского султана Кай Кобада 1-го (1219 – 1236).

Археологические исследования зафиксировали, что верхним хронологическим пределом находок средневековой материальной культуры в этом поселении является первая половина 13-го века, которая полностью соответствует факту отсутствия здесь монет 13 – 16-го веков.

Новые времена представлены серебряным выпуском Гянджинского ханства и тремя медными выпусками Карабахского ханства, которые датируются 17 – 18-ым веками; а также найденными при раскопках вблизи водного источника у подножья холма, русскими медными копейками 19-го в. – начала 20-го века.

Ռոբերտ Վարդանյան, Արմինե Զոհրաբյան, Համլետ Պետրոսյան

ԴՐԱՄՆԵՐ ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ

Տախտակ 1



Քաղաքի ընդհանուր հանույթը

Տախտակ 2

Նկ. 1. Երկրորդ կարաապային թաղում, 2010 թ.

Նկ. 2. Քարարկղային թաղում, 2016 թ.

Նկ. 3. Հինգերորդ կարաապային թաղում, 2017 թ.

Տախտակ 3

Նկ. 4. Տիգրանակերտ. Կենտրոնական փարածք

Տիգրանակերտի պեղումներով հայտնաբերված դրամներ

Տախտակ 4

8 *9* *10*

11 *12* *13* *14* *15* *16*

17 *18* *19* *20* *21* *22*

Տախտակ 5

23 *24* *25* *26*

27 *28* *29* *30*

31 *32* *33*

ԱՀԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ